

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2022 թվականի
դեկտեմբերի 8-ի N 1913 - Ն որոշման

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2020 թվականի
ապրիլի 30-ի N 718-Ն որոշման

**ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ
ՍՏՈՒԳԱԹԵՐԹԵՐ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Ստուգաթերթ N 1.11

**Ջրի հավաքման, մշակման և բաշխման նկատմամբ սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության
(ՏԳՏԴ ծածկագիր՝ E 36.00)**

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (ԱԱՏՄ) ստորաբաժանման անվանումը, հեռախոսահամարը, գտնվելու վայրը

ԱԱՏՄ-ի ծառայողի պաշտոնը

ազգանունը, անունը, հայրանունը

ԱԱՏՄ-ի ծառայողի պաշտոնը

ազգանունը, անունը, հայրանունը

Ստուգման սկիզբը (ամսաթիվը)՝ _____ 20 _____ թ. _____ ավարտը՝ _____ 20 _____ թ. _____

Տնտեսավարող սուբյեկտի անվանումը,

Հ Վ Հ Հ

--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--

Պետական ռեգիստրի գրանցման համարը, ամսաթիվը

Տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը, կայքի, էլեկտրոնային փոստի հասցեները

(հեռախոսահամարը)

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ փոխարինող անձի ազգանունը, անունը, հայրանունը

(հեռախոսահամարը)

Ստուգման հանձնարարագրի համարը՝ _____ տրված՝ _____ 20__թ.

Ստուգման նպատակը, պարզաբանման ենթակա հարցերի համարները՝ _____

Հ/Հ	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ	ՊԱՏԱՍԽԱՆ
1.	Ստորգետնյա և մակերեսային ջրաղբյուրների քարտեզագրման առկայությունը	
2.	Խմելու տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիների քարտեզագրման առկայությունը	
3.	Ջրամատակարարման համակարգի շահագործումն իրականացնող կազմակերպության իրավաբանական հասցեն, կոնտակտային տվյալները	
4.	Ջրի որակի մշտադիտարկում	
5.	Ջրամատակարարման աղբյուրի տեսակը (ստորերկրյա կամ մակերեսային)	

ՀԱՐՑԱՇԱՐ

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակի, խմելու տնտեսական նշանակության ջրմուղիների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիների սանիտարական կանոնների և նորմերի նվազագույն պահանջների կատարման նկատմամբ իրականացվող ստուգումների

NN ը/կ	Հարց	Հղում նորմատիվ իրավական ակտին	Այո	Ոչ	Զ/պ	Կշիռ	Ստուգման մեթոդ	Մեկնաբանություն
1.	Ստորերկրյա ջրերի ջրառները տեղակայված են արդյունաբերական օբյեկտների և բնակելի տարածքներից դուրս	Առողջապահության նախարարի 2002 թվականի նոյեմբերի 29-ի N 803 հրաման, կետ 2.2.1.1				3	Դիտողական Փաստաթղթային	
2.	Ստորերկրյա ջրերի առաջին գոտու սահմանը՝ պաշտպանված ստորերկրյա ջրերի օգտագործման դեպքում, ջրառից գտնվում է ոչ պակաս 30 մ հեռավորության վրա	Առողջապահության նախարարի 2002 թվականի նոյեմբերի 29-ի N 803 հրաման, կետ 2.2.1.1				2	Դիտողական Փաստաթղթային	
3.	Ստորերկրյա ջրերի առաջին գոտու սահմանը՝ ոչ բավարար պաշտպանված ստորերկրյա ջրերի օգտագործման դեպքում, ջրառից գտնվում է ոչ պակաս 50 մ հեռավորության վրա	Առողջապահության նախարարի 2002 թվականի նոյեմբերի 29-ի N 803 հրաման, կետ 2.2.1.1				2	Դիտողական Փաստաթղթային	
4.	Մակերեսային աղբյուրի ջրմուղի սանիտարական պահպանման առաջին գոտու սահմանը սահմանվում է ելնելով կոնկրետ պայմաններից.	Առողջապահության նախարարի 2002 թվականի նոյեմբերի 29-ի N 803 հրաման, կետ 2.3.1.1						
1)	ջրահոսքերի համար համաձայն Նշում 1*	Առողջապահության նախարարի				2	Դիտողական	

		2002 թվականի նոյեմբերի 29-ի N 803 հրաման, կետ 2.3.1.1 ենթակետ ա						
2)	ջրհավաքների համար (լճեր, ջրամբարներ) առաջին գոտու սահմանը սահմանվում է ջրառից ոչ պակաս 100 մ ջրատարածության բոլոր ուղղություններով և ջրառին սահմանակից ավով	Առողջապահության նախարարի 2002 թվականի նոյեմբերի 29-ի N 803 հրաման, կետ 2.3.1.1, ենթակետ բ				2	Դիտողական	
5.	Ջրհավաքների համար ապահովված են մակերեսային աղբյուրի ջրառի սանիտարական պահպանման երկրորդ գոտու սահմանները՝ ջրառից ջրատարածքի բոլոր ուղղություններով 3 կմ տարածության վրա	Առողջապահության նախարարի 2002 թվականի նոյեմբերի 29-ի N 803 հրաման, կետ 2.3.2.3				3	Դիտողական Փաստաթղթային	
6.	Ջրի կտրումից սանիտարական պահպանման երկրորդ գոտու եզրային սահմանները գտնվում են.	Առողջապահության նախարարի 2002 թվականի նոյեմբերի 29-ի N 803 հրաման, կետ 2.3.2.4						
1)	հարթ ռելիեֆի դեպքում՝ 500 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա	Առողջապահության նախարարի 2002 թվականի նոյեմբերի 29-ի N 803 հրաման, կետ 2.3.2.4, ենթակետ ա				1	Դիտողական Փաստաթղթային	
2)	տեղանքի լեռնային ռելիեֆի դեպքում՝ 750 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա	Առողջապահության նախարարի				1	Դիտողական Փաստաթղթային	

		2002 թվականի նոյեմբերի 29-ի N 803 հրաման, կետ 2.3.2.4, ենթակետ բ						
7.	Պահպանվում է ջրնուղու կառույցների սանիտարական պահպանման առաջին գոտու սահմանը.	Առողջապահության նախարարի 2002 թվականի նոյեմբերի 29-ի N 803 հրաման, կետ 2.4.2						
1)	պահեստային և կարգավորող տարողությունների, ֆիլտրների և կոնտակտային պարզարանների պատերից՝ 30 մ ոչ պակաս					2	Դիտողական Փաստաթղթային	
2)	ջրաճնշումային աշտարակներից՝ 10 մ ոչ պակաս					1	Դիտողական Փաստաթղթային	
3)	մնացած շենքերից՝ (նստեցման ավազաններ, ռեազենտային տնտեսություն, քլորի պահեստ, պոմպակայաններ և այլն) 15 մ ոչ պակաս					2	Դիտողական Փաստաթղթային	
8.	Ջրառի կառույցների սանիտարական պահպանման առաջին գոտու տարածքը պլանավորված է մակերեսային արտահոսքերի դրա սահմաններից դուրս հեռացման համար	Առողջապահության նախարարի 2002 թվականի նոյեմբերի 29-ի N 803 հրաման, կետ 3.2.1.1				3	Դիտողական	
9.	Ջրառի կառույցների սանիտարական պահպանման առաջին գոտու տարածքը պարսպված է	Առողջապահության նախարարի 2002 թվականի նոյեմբերի 29-ի N 803 հրաման, կետ 3.2.1.1				3	Դիտողական	
10.	Ջրառի կառույցների սանիտարական պահպանման առաջին գոտու տարածքը ապահովված է պահպանությունով	Առողջապահության նախարարի				3	Դիտողական	

		2002 թվականի նոյեմբերի 29-ի N 803 հրաման, կետ 3.2.1.1						
11.	Ստորերկրյա ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման առաջին գոտու տարածքում չեն իրականացվում ջրմուղի կառույցների շահագործման, ընդլայնման, վերակառուցման հետ կապ չունեցող շինարարական աշխատանքներ	Առողջապահության նախարարի 2002 թվականի նոյեմբերի 29-ի N 803 հրաման, կետ 3.2.1.2				2	Գիտողական	
12.	Սանիտարական պահպանման առաջին գոտու շենքերը կոյուղացված են՝ ունեն կեղտաջրերի հեռացմամբ մոտակա կոյուղու համակարգ կամ սանիտարական պահպանման առաջին գոտուց դուրս գտնվող տեղական կեղտաջրերի մաքրման կայաններ	Առողջապահության նախարարի 2002 թվականի նոյեմբերի 29-ի N 803 հրաման, կետ 3.2.1.3				2	Գիտողական	
13.	Սանիտարական պահպանման երկրորդ և երրորդ գոտիներում չկան ստորերկրյա ջրերի քիմիական աղտոտման վտանգ ներկայացնող վառելիքաքսայուղային նյութերի, թունաքիմիկատների և պարարտանյութերի պահեստներ, արտադրական կեղտաջրերի կուտակիչների շլամապահեստարաններ	Առողջապահության նախարարի 2002 թվականի նոյեմբերի 29-ի N 803 հրաման, կետ 3.2.2.4				2	Գիտողական	
14.	Ստորերկրյա ջրամատակարարման աղբյուրի սանիտարական պահպանման երկրորդ գոտում տեղակայված չեն գերեզմանոցներ, անասնագերեզմանոցներ, ասենիզացիոն, գոման դաշտեր, գոմաղբի պահեստարաններ, սիլոսային առվափոսեր, անասնաթռչնաբուծական	Առողջապահության նախարարի 2002 թվականի նոյեմբերի 29-ի N 803 հրաման, կետ 3.2.3.1				2	Գիտողական	

	օբյեկտներ, ստորերկրյա ջրերի մանրէաբանական աղտոտման վտանգ ներկայացնող այլ օբյեկտներ						
15.	Մակերեսային ջրամատակարարման աղբյուրի սանիտարական պահպանման առաջին գոտում կեղտաջրեր չեն թափում, չեն լողանում, լվացք չի արվում, անասուններին ջուր չեն խմեցնում	Առողջապահության նախարարի 2002 թվականի նոյեմբերի 29-ի N 803 հրաման, կետ 3.3.1.2				1	Դիտողական
16.	Մակերեսային ջրամատակարարման աղբյուրի սանիտարական պահպանման երկրորդ գոտում՝ 500 մ ոչ պակաս լայնությամբ ավամերձ շերտագծի սահմաններում, տեղակայված չեն արոտավայրեր, ինչպես նաև չեն օգտագործվում անտառներ, հողամասեր և ջրամբար, որը կարող է բերել ջրամատակարարման աղբյուրի ջրի որակի վատթարացման	Առողջապահության նախարարի 2002 թվականի նոյեմբերի 29-ի N 803 հրաման, կետ 3.3.3.1				1	Դիտողական
17.	Ջրամատակարարման համակարգում առաջացած վթարային իրավիճակներ կամ տեխնիկական շեղումներ առաջնալիս ջրամատակարարման համակարգի շահագործումն իրականացնող կազմակերպության կողմից տեղյակ է պահվել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանմանը	Առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N 876 հրաման, կետ 2.3				1	Փաստաթղթային

18.	Ջրամատակարարման համակարգի շահագործումը իրականացնող կազմակերպությունը խմելու ջրի լաբորատոր հետազոտության արդյունքում սանիտարական կանոններին չհամապատասխանող յուրաքանչյուր նմուշի վերաբերյալ անհապաղ տեղյակ է պահել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանմանը	Առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N 876 հրաման, կետ 2.3				1	Փաստաթղթային	
19.	Ջրամատակարարման համակարգի շահագործումը իրականացնող կազմակերպությունը կազմել և հաստատել է խմելու ջրի արտադրական հսկողության ծրագիր	Առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N 876 հրաման, կետ 2.6.2				1	Փաստաթղթային	
20.	Համաճարակային առումով խմելու ջրի անվտանգությունը համապատասխանում է Նշում 2*-ում բերված ցուցանիշներին.	Առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N 876 հրաման, կետ 3.3						
1)	մանրէաբանական ցուցանիշներով					3	Փաստաթղթային Լաբորատոր փորձաքննություն	
2)	մակաբուժաբանական ցուցանիշներով					3	Փաստաթղթային Լաբորատոր փորձաքննություն	
21.	Խմելու ջրի որակի մանրէաբանական ցուցանիշների հետազոտման ժամանակ յուրաքանչյուր նմուշում որոշվում են.	Առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N 876 հրաման, կետ 3.3.1						

1)	ջերմատուլերանտ կոլիֆորմ մանրէները					2	Փաստաթղթային	
2)	ընդհանուր կոլիֆորմ մանրէները					2	Փաստաթղթային	
3)	մանրէների ընդհանուր քանակը					2	Փաստաթղթային	
4)	կոլիֆագերը					2	Փաստաթղթային	
22.	Խմելու ջրի նմուշում ջերմատուլերանտ կոլիֆորմ մանրէների և/կամ ընդհանուր կոլիֆորմ մանրէների և/կամ կոլիֆագերի հայտնաբերման դեպքում կատարվում է.	Առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N 876 հրաման, կետ 3.3.2						
1)	դրանց որոշում՝ հրատապ վերցրած կրկնակի նմուշառնված ջրում					2	Փաստաթղթային	
2)	քլորիդների, ամոնիումային ազոտի, նիտրիտների և նիտրատների որոշում					2	Փաստաթղթային	
23.	Խմելու ջրի կրկնակի հետազոտությունների ժամանակ 100 մլ-ում 2-ից ավելի ընդհանուր աղիքային խմբի մանրէների և/կամ ջերմատուլերանտ կոլիֆորմ մանրէների և/կամ կոլիֆագերի հայտնաբերման դեպքում կատարվում է խմելու ջրի նմուշների հետազոտություն՝ կոլիֆորմ ախտածին մանրէների և/կամ աղիքային վիրուսների հայտնաբերման վերաբերյալ	Առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N 876 հրաման, կետ 3.3.3				2	Փաստաթղթային	

24.	Ջրամատակարարման համակարգով տրվող խմելու ջրի որակը ըստ քիմիական կազմի, համապատասխանում է նորմերին, այդ թվում.	Առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N 876 հրաման, կետ 3.4						
1)	ընդհանրացված ցուցանիշներով և բնական ջրերում հաճախ հանդիպող վնասակար քիմիական նյութերի, ինչպես նաև համատարած նշանակություն ստացած անտրոպոգեն ծագումով նյութերի պարունակությունը Նշում 3*	Առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N 876 հրաման, կետ 3.4.1				3	Փաստաթղթային Լաբորատոր փորձաքննություն	
2)	ջրամատակարարման համակարգում ջրի մշակման ժամանակ ներմուծված և առաջացած վնասակար քիմիական նյութերի պարունակությունը Նշում 4*	Առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N 876 հրաման, կետ 3.4.2				3	Փաստաթղթային Լաբորատոր փորձաքննություն	
3)	Պահպանվում են խմելու ջրի բարենպաստ զգայորոշական հատկությունները Նշում 5*	Առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N 876 հրաման, կետ 3.5.1				3	Փաստաթղթային Լաբորատոր փորձաքննություն	
4)	Խմելու ջրում բացակայում են անզեն աչքով տեսանելի տարբեր ջրային օրգանիզմները և մակերեսային թաղանթը	Առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N 876 հրաման, կետ 3.5.2				3	Դիտողական	
25.	Ապահովվում է ջրամատակարարման համակարգով տրվող խմելու ջրի	Առողջապահության նախարարի 2002				2	Փաստաթղթային Լաբորատոր փորձաքննություն	

	ճառագայթային անվտանգությունը՝ ընդհանուր a և β ակտիվության ցուցանիշներով Նշում 6*	թվականի դեկտեմբերի 25-ի N 876 հրաման, կետ 3.6						
26.	Խմելու ջրի որակի նկատմամբ իրականացվում է արտադրական հսկողություն	Առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N 876 հրաման, կետ 4.1				3	Փաստաթղթային	
27.	Ջրառի տեղերում խմելու ջրի լաբորատոր հետազոտությունների նմուշների քանակը և հետազոտությունների պարբերականությունը համապատասխանում է սահմանված պահանջներին Նշում 7*	Առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N 876 հրաման, կետ 4.3				2	Փաստաթղթային	
28.	Մինչև ջրաբաշխիչ ցանց մտնելը խմելու ջրի որոշվող ցուցանիշների տեսակները և հետազոտվող նմուշների քանակը համապատասխանում է սահմանված պահանջներին Նշում 8*	Առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N 876 հրաման, կետ 4.4				2	Փաստաթղթային	
29.	Ջրամատակարարման բաշխիչ ցանցում խմելու ջրի արտադրական հսկողությունը մանրէաբանա- կան և զգայորոշական ցուցանիշներով կատարվում է սահմանված հաճախականությամբ Նշում 9*	Առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N 876 հրաման, կետ 4.5				3	Փաստաթղթային	
30.	Խմելու ջրի որակի արտադրական հսկողությունն աշխատանքային ծրագրի համաձայն իրականաց- վում է ջրամատակարարման համակարգերը շահագործող կազմակերպությունների	Առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N 876				3	Փաստաթղթային	

	լաբորատորիաների կողմից կամ պայմանագրային կարգով՝ խմելու ջրի որակի հետազոտություններ կատարելու իրավունք ունեցող (հավատարմագրված) այլ կազմակերպությունների լաբորատորիաների կողմից	հրաման, կետ 4.7						
31.	Բժշկական զննության ենթակա անձնակազմն ենթարկվել են նախնական և պարբերական բժշկական զննության. Նշում 10*	Կառավարության 2003 թվականի մարտի 27-ի N 347-Ն որոշում						
1)	առկա է սանիտարական գրքույկը՝ պահանջվող ձևով,					1	Փաստաթղթային	
2)	պահպանվում է բժշկական զննության հետազոտությունների ծավալը					1	Փաստաթղթային	
3)	պահպանվում է բժշկական զննության հետազոտությունների պարբերականությունը					1	Փաստաթղթային	

Ծանոթություններ*

Նշում 1*

1. Մակերեսային աղբյուրի ջրն ուղի սանիտարական պահպանման առաջին գոտու սահմանը սահմանվում է, ելնելով կոնկրետ պայմաններից հետևյալ կերպ՝

ա) ջրահոսքերի համար

- հոսանքով վերև-ջրառից 200 մ ոչ պակաս,

- հոսանքով ներքև-ջրառից 100 մ ոչ պակաս,

- ջրառին սահմանակից ավիով-ջրի կտրման գծից 100 մ ոչ պակաս,

- ջրառին հակառակ ավիով-ամբողջ տարածությունը և հակառակ ավիը 50 մ ոչ պակաս լայնքով ջրի կտրման գծից:

Նշում 2*

ԽՄՆԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՄԱԿԱԲՈՒԾԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՆՈՐՄԵՐ

Ցուցանիշներ	Չափման միավորներ	Նորմաներ
Ջերմատուլերանտ կոլիֆորմ մանրէներ 1/	100 մլ-ում մանրէների քանակ	Բացակայություն
Ընդհանուր կոլիֆորմ մանրէներ 2/	100 մլ-ում մանրէների քանակ	Բացակայություն
Մանրէների ընդհանուր քանակություն 2/	Գաղութներ առաջացնող մանրէների քանակը 1 մլ-ում	50-ից ոչ ավել
կոլիֆագեր 3/	Վահանակ առաջացնող միավորների (ՎԱՄ) քանակը 100 մլ-ում	Բացակայություն
Սուլֆիտվերականգնող կլոստրիդիաների սպորներ 4/	Սպորների քանակը 20 մլ-ում	Բացակայություն
Լյամբյանների ցիստեր 3/	Ցիստերի քանակը 50 մլ-ում	Բացակայություն
աղիքային ցուպիկ՝ «Esherichia coli»	100մլ-ում մանրէների քանակ	0
էստերոկոկկ-«Enterococci»	100մլ-ում մանրէների քանակ	0

1/ Որոշման ժամանակ կատարվում է վերցված 100 մլ ջրի նմուշի եռանվազ հետազոտություն:

2/ Նորմատիվների գերազանցումը չի թույլատրվում ջրամատակարարման արտաքին և ներքին ցանցի ջրաբաշխիչ կետերից վերցված նմուշների 95 տոկոսում, 12 ամսվա ընթացքում, 100-ից ոչ պակաս հետազոտված նմուշների քանակի դեպքում, տարվա ընթացքում:

3/ Հետազոտությունները կատարվում են միայն մակերեսային ջրի աղբյուրներից սնվող ջրամատակարարման համակարգերում մինչև ջրաբաշխիչ ցանց մտնելը:

4/ Հետազոտությունը կատարվում է ջրի մշակման տեխնոլոգիական եղանակի արդյունավետության գնահատման ժամանակ:

Նշում 3*

ԸՆԴՀԱՆՐԱՑՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՎ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԶՐԵՐՈՒՄ ՀԱՃԱՆ ՀԱՆԴԻՊՈՂ ՎՆԱՍԱԿԱՐ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՆՏՐՈՊՈՂԵՆ ԾԱԳՈՒՄՈՎ ՆՅՈՒԹԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՆԵՐԻ ՆՈՐՄԵՐԸ

Ցուցանիշներ	Չափման միավորներ	Նորմատիվներ սահմանային թույլատրելի կոնցենտրացիա (ՄԹԿ) ոչ ավել	Վնասակարության ցուցանիշ 1/	Վտանգավորության դաս
Ընդհանրացված ցուցանիշներ				
Ջրածնային ցուցանիշ	PH միավորներ	6-9 սահմաններում		
Ընդհանուր հանքայնացում (չոր մնացորդ)	մգ/լ	1000 (1500) ^{2/}		
Ընդհանուր կոշտություն	մմոլ/լ	7,0 (10) ^{2/}		
Պերմանգանատային օքսիդացում	մգ/լ	5.0		
Նավթամթերքներ, գումարային	մգ/լ	0,1		
Մակերեսային ակտիվ նյութեր (ՄԱՆ) անիոնաակտիվ	մգ/լ	0.5		
Ֆենոլային ինդեքս	մգ/լ	0.25		
Անօրգանական նյութեր				
Ալյումինիում (Al ³⁺)	մգ/լ	0.5	ս/թ	2
Բարիում (Ba ²⁺)	-/-	0.1	-/-	2
Բերիլիում (Be ²⁺)	-/-	0.0002	-/-	1
Բոր (B, գումարային)	-/-	0.5	-/-	2
Երկաթ (Fe, գումարային)	-/-	0.3 (1.0) ^{2/}	զգայ.	3
Կադմիում (Cd, գումարային)	-/-	0.001	ս.-թ.	2
Մանգան (Mn, գումարային)	-/-	0.1 (0.5) ^{2/}	զգայ.	3
Պղինձ (Cu, գումարային)	-/-	1.0	-/-	3
Մոլիբդեն (Mo, գումարային)	-/-	0.25	ս.-թ.	2
Արսեն (As, գումարային)	-/-	0.05	-/-	2
Նիկել (Ni, գումարային)	-/-	0.1	-/-	3

Նիտրատներ (ըստ NO ₃)	-/-	45	զգայ.	3
Մադիկ (Hg, գումարային)	-/-	0.0005	ս.-թ.	1
Կապար (Pb, գումարային)	-/-	0.03	-/-	2
Սելեն (Se, գումարային)	-/-	0.01	-/-	2
Ստրոնցիում (Sr ²⁺)	-/-	7.0	-/-	2
Սուլֆատներ (SO ₄ ²⁻)	-/-	500	զգայ.	4
Ֆտորիդներ (F ⁻)	-/-		-/-	
Կլիմայական շրջանների համար				
-I և II	-/-	1.5	ս.-թ.	2
III	-/-	1.2	-/-	2
Քլորիդներ (Cl ⁻)	-/-	350	զգայ.	4
Քրոմ (Cr ⁶⁺)	-/-	0.05	ս.-թ.	3
Ցիանիդներ (CN ⁻)	-/-	0.035	-/-	2
Ցինկ (Zn ²⁺)	-/-	5.0	զգայ.	3
Օրգանական նյութեր				
γ - ՀԲՑՀ (լինդան)	-/-	0.002 _{3/}	ս.-թ.	1
ԴԴՏ (իզոմերների գումար)	-/-	0.002 _{3/}	-/-	2
2,4-Դ	-/-	0.03 _{3/}	-/-	2

1/ Նյութի վնասակարության լիմիտավորող հատկանիշը, որով սահմանված է նորմատիվը՝ «ս. -թ.» - սանիտարաթունաբանական, «զգայ.» - զգայորոշական:

2/ Փակագծերում նշված մեծությունը կարող է սահմանվել տարածքի գլխավոր պետական սանիտարական բժշկի որոշմամբ՝ ջրամատակարարման տվյալ համակարգի համար, ելնելով բնակավայրի սանիտարահամաճարակային իրավիճակից և օգտագործվող ջրապատրաստման տեխնոլոգիայից:

3/ Նորմատիվներն ընդունված են Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) առաջարկություններին համապատասխան:

Նշում 4*

ԽՄԵԼՈՒ ԶՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԵՎ ԱՌԱՋԱՑՈՂ ՎՆԱՍԱԿԱՐ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՆԵՐԻ (ՍԹ-Կ/ ՆՈՐՄԵՐԸ

Ցուցանիշներ	Չափման միավորներ	Նորմեր սահմանային թույլատրելի կոնցենտրացիա (ՍԹ-Կ) ոչ ավել	Վնասակարության ցուցանիշ	Վտանգավորության դաս
Քլոր 1/				
-մնացորդային ազատ	մգ/լ	0.3-0.5 սահմաններում	զգայ.	3
-մնացորդային կապված	-//-	0.8-0.12 սահմաններում	-//-	3
քլորոֆորմ (ջրի քլորացման դեպքում)	-//-	0.2 2/	ս.-թ.	2
օզոն մնացորդային 3/	-//-	0.3	զգայ.	
ֆորմալդեհիդ (ջրի օզոնացման դեպքում)	-//-	0.05	ս.-թ.	2
պոլիակրիլամիդ	-//-	2.0	-//-	2
ակտիվացված սիլիկաթթու (ըստ Si)	-//-	10	-//-	2
պոլիֆոսֆատներ (ըստ PO ₄ ³⁻)	-//-	3.5	զգայ.	3
այլումինիում և երկաթ պարունակող կոագուլյանտների մնացորդային քանակներ	-//-	նայել ցուցանիշներ «Այլումինիում» երկաթ» աղ. 2		

1/ Ազատ քլորով ջրի վարակազերծման դեպքում ջրի հետ դրա կոնտակտը պետք է լինի 30 րոպեից ոչ պակաս, կապված քլորով -60 րոպեից ոչ պակաս: Մնացորդային քլորի պարունակության հսկողությունն իրականացվում է մինչև ջրի ջրաբաշխիչ ցանց մղելը: Ջրում ազատ և կապված քլորի միաժամանակ առկայության դեպքում դրանց ընդհանուր կոնցենտրացիան չպետք է գերազանցի 1,2 մգ/լ: Առանձին դեպքերում ՀՀԿ կենտրոնի համաձայնությամբ խմելու ջրում հնարավոր է թույլատրել քլորի ավելի բարձր կոնցենտրացիա:

2/ Նորմատիվն ընդունված է ԱՀԿ-ի առաջարկություններին համապատասխան:

3/ Մնացորդային օզոնի պարունակության հսկողությունն իրականացվում է խառնման խցիկից հետո, ապահովելով 12 րոպեից ոչ պակաս կոնտակտ:

Նշում 5*

ԽՄԵԼՈՒ ԶՐԻ ԶԳԱՅՈՐՈՇԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՆՈՐՄԵՐԸ

Ցուցանիշներ	Չափման միավորներ	Նորմեր, ոչ ավելի
Հոտ	բալեր	2
Համ	-//-	2
Գունավորում	աստիճաններ	20 /35/ 1)
Պղտորություն	ՖՊՄ (ըստ ֆորմազինի) պղտորության միավոր կամ մգ/լ (ըստ կառլինի)	2.6 /35/ 1) 1.5 /2/ 1)

Փակագծերում նշված մեծությունը կարող է սահմանվել տվյալ տարածքի գլխավոր պետական սանիտարական բժշկի որոշումով, տվյալ ջրամատակարարման համակարգի համար, ելնելով բնակավայրի սանիտարահամաճարակային իրավիճակի գնահատականից և օգտագործվող ջրապատրաստման տեխնոլոգիայից:

Նշում 6*

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԵՐԸ

Ցուցանիշներ	Չափման միավորներ	Նորմեր	Վնասակարության ցուցանիշ
Ընդհանուր α - ռադիոակտիվություն	Բկ/լ	0.1	ռադիաց.
Ընդհանուր β - ռադիոակտիվություն	Բկ/լ	1.0	-//-

Նշում 7*

ՋՐԱՌԻ ՏԵՂԵՐՈՒՄ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ցուցանիշների տեսակներ	Մեկ տարվա ընթացքում նմուշների քանակը, ոչ պակաս	
	Ստորգետնյա աղբյուրների համար	Մակերեսային աղբյուրների համար
Մանրէաբանական	4 (ըստ տարվա եղանակների)	12 (ամենամայա)
Մակարոծական	չեն կատարվում	-//-
զգայորոշման	4 (ըստ տարվա եղանակների)	12 (ամենամայա)
ընդհանրացված ցուցանիշներ	-//-	-//-
անօրգանական և օրգանական նյութեր	1	4 (ըստ տարվա եղանակների)
Ռադիոլոգիական	1	1

Նշում 8*

ՄԻՆՉԵՎ ԲԱՇԽԻՉ ՑԱՆՑ ԽՄԵԼՈՒ ՋՐՈՒՄ ՈՐՈՇՎՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՎՈՂ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ցուցանիշների տեսակներ	Մեկ տարվա ընթացքում նմուշների քանակը, ոչ պակաս				
	Ստորգետնյա աղբյուրների համար			Մակերեսային աղբյուրների համար	
	Տվյալ ջրահամակարգից ջրով ապահովող բնակչության թիվը, հազար մարդ				
	մինչև 20	20-100	100-ից բարձր	մինչև 100	100-ից բարձր
Մանրէաբանական	50 ^{1/}	150 ^{2/}	365 ^{3/}	365 ^{3/}	365 ^{3/}
Մակարոծական	չեն կատարվում			12 ^{4/}	12 ^{4/}
Զգայորոշման	50 ^{1/}	150 ^{2/}	365 ^{3/}	365 ^{3/}	365 ^{3/}
Ընդհանրացված ցուցանիշներ	4 ^{4/}	6 ^{5/}	12 ^{6/}	12 ^{6/}	24 ^{7/}
Անօրգանական և օրգանական նյութեր	1	1	1	4 ^{4/}	12 ^{6/}
Ջրապատրաստման տեխնոլոգիայի հետ կապված ցուցանիշներ	Մնացորդային քլոր, մնացորդային օզոն ոչ պակաս մեկ անգամ մեկ ժամում, մնացած ռեազենտները ոչ պակաս մեկ անգամ հերթափոխի ընթացքում				

Ռ-ադիոլոգիական	1	1	1	1	1
----------------	---	---	---	---	---

1. Ընդունվում է ջրի նմուշների վերցման հետևյալ պարբերականությունը՝
1/ շաբաթը մեկ անգամ, 2/ շաբաթը 3 անգամ, 3/ ամեն օր, 4/ 1 անգամ տարվա եղանակների ընթացքում, 5/ 2 ամիսը մեկ անգամ, 6/ ամիսը 1 անգամ, 7/ ամիսը 2 անգամ:
2. Եթե մինչև 20 հազար մարդու խմելու ջրով ապահովող ստորգետնյա աղբյուրներից սնվող ջրնուղու ջուրը չի վարակազերծվում, ապա մանրէաբանական և զգայորոշական ցուցանիշներով հետազոտությունները կատարվում են ամիսը 1 անգամից ոչ պակաս:
3. Հեղեղների և արտակարգ իրավիճակների դեպքում անհրաժեշտ է սահմանել խմելու ջրի որակի հսկողության ուժեղացված ռեժիմ՝ ՊՀՀ տեսչության տարածքային կենտրոնի համաձայնությամբ:

Նշում 9*

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԲԱՇԽԻՉ ՑԱՆՑՈՒՄ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԱՐՏԱԳՐԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՄԱՆԲԷԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԶԳԱՅՈՐՈՇԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սպասարկվող բնակչության քանակը, հազ. մարդ	Նմուշների քանակը մեկ ամսում
մինչև 10	2
10-20	10
20-50	30
50-100	100
100-ից ավել	100+1 նմուշ, յուրաքանչյուր 5 հազար մարդու համար 100 հազարից ավել բնակչության դեպքում

Նմուշների քանակի մեջ չեն մտնում պարտադիր հսկողական նմուշները, որոնք վերցվում են ցանցի վերանորոգումից կամ այլ տեխնիկական աշխատանքներ կատարելուց հետո:

Նշում 10*

Կազմակերպություններ և մասնագիտություններ	Թերապևտի ընտանեկան բժշկի գնում	Հետազոտություններ տուբերկուլոզի նկատմամբ	Մաշկավեճեր րաբանի գնում	Հետազոտություն սիֆիլիսի նկատմամբ	Հետազոտություն աղիքային վարակիչ հիվանդությունների նկատմամբ (մանրէակրություն)	Հետազոտություններ հելմինթակրության նկատմամբ	Հետազոտություն վիրուսային հեպատիտ Բ-ի նկատմամբ	Հետազոտություն վիրուսային հեպատիտ Ց-ի նկատմամբ	Հետազոտություն քիթ-ըմպանի ախտածին ստաֆիլակոկի նկատ
Զրմուղների կառույցների աշխատողներ, որոնք անմիջականորեն առնչվում են խմելու ջրի մաքրմանը, վարակազերծմանը և ջրամատակարարման ցանցի պասարկմանը	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ				Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ			

1.	«Այո» - այո, առկա է, համապատասխանում է, բավարարում է	v		
2.	«Ոչ» - ոչ, առկա չէ, չի համապատասխանում, չի բավարարում		v	
3.	«Զ/պ» - չի պահանջվում, չի վերաբերվում			v

Տվյալ ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա՝

1. Կառավարության 2003 թվականի մարտի 27-ի N 347-Ն որոշում:
2. Առողջապահության նախարարի 2002 թվականի նոյեմբերի 29-ի N 803 հրաման:
3. Առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N 876 հրաման:

Տեսչական մարմնի ծառայող _____
(ստորագրություն)

Տստեսավարող _____ »:
(ստորագրություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ